ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/3

«03» 01 2025 թ.

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
(ՀՎՀՀ 03804898)
ՀՀ Արարատի մարզ քաղաք
Մասիս 1 փողոց
էլ. հասցե՝ vaghinak.yeghiazaryan@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 25.03.2024թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ-1 ծածկագրով պայմանագրի և 06.05.2024թ. թիվ 1 համաձայնագրի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ–ն Պայմանագրի թիվ 25 չափաբաժնի մասով պետք է մատակարարեր 1200 հատ կարճաթև սպիտակ գույնի վերնաշապիկ, որից վերջինս մատակարարել է 620 հատը, իսկ 580 հատ կարճաթև սպիտակ գույնի վերնաշապիկի մատակարարում չի կատարվել:

11.07.2024թ. թիվ Ն/13/140340-24 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների խախտման մասին: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել ապրանքատեսակը և չի կատարվել պայմանագրային պարտականությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Եթե

գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից առ 25.12.2024թ. հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար 0.05% չափով տույժ՝ 13 977,28 և 0.5% չափով տուգանք՝ 16 908 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ-1 ծածկագրով Պայմանագիրը՝ 25-րդ չափաբաժնի մասով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 507 240 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 338 160 ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 03 >> 01 2025թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32